

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԵՏԻ, Ս. ՎԱՍԻՆ ԲՈՂՈՅ

ՄՈՒԳԱԹՅԱՄԻ ԶԻՅՆ ԴԻՄԱՅ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԷԿ անգլա-համար տողը 3 ՂՂ. ողձ.
ՄԷԿ անգլա-համար տողը 3 ՂՂ. ողձ.
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՎԱՍԻՆ ԲՈՂՈՅ

Տարեկան ՂՂ. ողձ 400
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՆԵՐՈՒ ԼՍՄԱՒ

Տարեկան Պր. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՄԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՒ ՈՒՂՂՈՒՄՈՒ

ՈՒՆԻ Ե ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱԼՓԻՄԻ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿԸ

Թերեւս քիչ մը ուշ, բայց վերջապէս արդարութիւնը յաղթանակ մը եւս կրնայ արձանագրել իր պահանջի կողմը ինչպէս սովոր է ընել, ամեն ուրեք, ամեն տեղ եւ նոյն իսկ... Միւս կեանքի թատերախաղերուն վերջի արարուածներուն մէջ:

Աղբքանդերի եկեղեցւոյ շրջափակին մէջ թագաւորութեան մը կործանումին ակնատես կ'ըլլանք կոր եւ զարմանալի զուգահեռութեամբ մը Հայոց վերջին հարստութեան պէս, այս թագաւորութեան ալ վերջին վեհապետը... Լեւոն անունը կը կրէ:

Որքան որ անկեանքներու վրայ զըւարճաբանել իմ խառնուածքիս եւ կամ ուրիշութեանց մէջ չի գտնուի, սակայն որքանքը զայն ուզեցէ՛ք, հրապարակագիրը կ'ըմբոստանայ ներսիդիս եւ խմբագրատան մը մէջ առաջինը պէտք է տեղի տայ վերջնոյն:

Լրագրութեան մէջ օրէնք մ'է այս եւ ամեն օրէնքներու պէս պէտք է որ յարգուի, ճար չկայ:

Կուզէ՞ Տիար Լեւոն Մկրտիչեան ինք հրաժարած ըլլայ, կուզէ թաղական խորհուրդը գաղութացած ըլլայ զինքը պաշտօնէն — օ՛հ, այդ երկու պարագային մէջ տարբերութիւնը, nuanceը այնքան աննշան է որ ոչ ոքի մտքէն պիտի անցնի ասոր համար փաշայի մը գլուխը ցաւցնել — այսօր իրողութիւն մը կայ մէջտեղ, այն է թէ՛ զայն թաղականութիւն մըն է որ կը դադարէ, կիրքերն են որ կը մարին, եւ արդար պահանջում մըն է որ գոհացում կը գտնէ:

Արդէն ասկէ աւելին փնտռող չկար շնորհաբ 1901 թուականին մէջ:

Սրբոյն Պողոսի եւ Պետրոսի հովանւոյն ներքեւ, ժողովրդի ձայնին — որու համար Աստուծոյ ձայնն է կ'ըսեն ինչ տեղի խելացիները — ժողովրդի ձայնին կարեւորութիւն չի տուող քմահաճ թաղականութեան մը պաշտպանութեան տակ եւ ամբողջ հասարակութեան մը աչքին առջեւ խաղացուած խաղերն ինչ տեղի չէր կրնար տեսլ եւ երախտապարտ պէտք է ըլ-

լանք Տիար Լեւոն Մկրտիչեանի եթէ իրաւ, ինքն է որ իր ձեռքով վար կ'առնէ այդ կատակերգութեան վերջին վարագործը:

Այն կացութիւնը զոր հրաժարեալ քարտուղարը — տեսակ մը Զեմպըր-Լէյն — Աղբքանդերի հայերուն մէջ ստեղծեց, այնքան խղճալի, այնքան անհեթեթ եւ այնքան գայթակղեցուցիչ էր որ քիչ մը եւս եւս վերջի շնաւ շրջափակին մէջ Աստուծոյ տաճարին քովիկը, կրանիթէ հոյակապ շինքի մը տակ հանգչող Մեծ Հայր ան՝ որ արդարութիւնը տուաւ Եգիպտոսի, պիտի զարթնար իր յաւատեանքէն բուռն, դիտել տալու համար թէ արդարութիւնը՝ խառն Դատարաններէն դուրս ալ կրնար ի գործ դրուիլ առանց տարեկան 27,000 Փրանքի թոշակ մը յատկացնելու զայն գործադրել ուղղորդելուն:

Բարեբաղդաբար հարկ չեղաւ այդ նեղութիւնը պատճառել երջանկայիշատակ ծերունոյն, բանի որ որդին ոչ նուազ արդարաւէր եղաւ քան իր հայրը եւ զգաց պէտքը արմատական փոփոխութեան մը որը անհրաժեշտ կը դարձնէր հեռացումը միահեծան քարտուղարին:

Այսպէս է աշխարհ, պղտիկները միշտ պիտի տուեն մեծերուն համար:

Լեւոն Մկրտիչեան ինչեւ թաղական լրագր մը պիտի ըլլար — եւ ասոր համար պէտք եղած ամեն յատկութիւնները ունի — քարտուղարներուն լաւագոյնը պիտի ըլլար, կ'ըսենք, եթէ այդ թաղական աղանքը առջի օրէն գիտնալին գծել իր պարտականութիւնն, ներուն սահմանները եւ ժամանակին սահման գիտնալին անհերքելի յոխորտանքները զորս յաջ եւ յահակ կը սիրէր սփռել իրենց սիրական գրագիրը:

Քիչ մը եւս՝ զիկտատորի տիտղոսը պիտի տրուէր իրեն եթէ մամուլը իր հետ ունենալով ժողովրդեան ձայնը, վերջ մը չընէր իրաց այդ կացութեան:

Այն անպատշաճ եւ անհերքելի անտարբերութիւնը զոր Լեւոն Մկրտիչեան կը ցուցունէր հանգչող ժողովրդեան բանացի գիտողութիւններուն, այն je m'en f...steի գիրքը որ այնքան կը սիրէր բռնել օրէնքներու գործադրութիւնը փափաքողներու նկատ-

մամբ, համայնագէտի եւ ամենակաւորի իր յաւակնոտութիւնները, այս ամենը արդիւնք էին այն տկարութեան որ թաղական խորհուրդին յատկանշիչ պիտի մնայ յաւատ, շրջապատող դերն էր զոր Մկրտիչեան կատարեց ի ֆլուս իրեն եւ ի ֆլուս հանրութեան:

Ուրիշի հաշտին շաղանակները կրակէն դուրս քաշեց առանց սակայն ոչ ոքի ծառայութիւն մը մատուցած ըլլալու:

Աղբքանդերի կուսակցութեան բոյն մը եղաւ, երկպառակութիւնը օրուան նորոյթին է հոն եւ երբեմն լաւագոյն բարեկամները զիրար բղղտելու աստիճան թշնամի դարձան իրարու:

Ահա պիղծանք Լեւոն Մկրտիչեանի հինգ տարուան պաշտօնավարութեան:

Իր կուսակցասէր ոգին լաւագոյն ասպարէզ մը չէր կրնար գտնել այլուր, քանզի ամեն տեղ ատանկ մեղքէ եւ մոռնէ շինուած թաղականներ չէն վիտար հայերու բաղդէն:

(Շարունակելի) Յ. Ա.

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

ԴՅՈՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ...

Օր ընդ մէջ Կարնոյ Առաջնորդ Տ. Զաւէն Ծ. Վ. կը գումէ հեռագրով սոյն աղիտարեր թօթը, որ սիրտ կը ճմլէ եւ աղիք կը պատռէ: Խորհիլ թէ երբ մենք հոս գեղեցիկ օդ կուենանք, հոն ցնցման աղետքը կը սպառնայ եւ ցուրտը սաստիկ է: Անտանելի բան:

Աղբք. վարչութիւնը ո'րքան մեծ եւ ռանգով որոշեց հանգանակութիւն մը կատարել տալ, հանգանակիչ Մասնախումբը այնքան կանուխ փութաց անոր գործադրութեանը:

Թերեւս իսկական ցաւով մը նկարագրեցին երկրաշարժի աղէտքին մեծութիւնը. Լաստիվերացիի մը գրչով գործածեցին ամեն յուշիկ եւ խշխշացնող բառ ժողովրդին գութը շարժելու եւ անոր աչքերէն արցունք խլելու երկրաշարժի այդ դժբաղդ արկածեալներուն համար:

Քանիք մենք ճշմարիտ վիշտ զգալով երկրաշարժի լուրէն, երկրորդ օրէն իսկ սկսան զրկել զիրենց անհատական հա-

ճոյքներէ: Քանիք մտադրեցին կաղանկ չընել բնաւ՝ ցուրտին ու ձիւնին ցնցոտիներու տակ զոհուիլ ու զողացող անոյշ մանկիկներու կաղանկըներ նուիրելու համար:

Զգացմանց սրտառու աքաղաղութեան գեղեցիկ օրինակները ցոյց տուին բարեսիրտ մեծատուններ եւ միջակ դասակարգի գթութ անդամներ, որոնք վարժուած են արդէն տալ ամեն աղթիւ. սակայն ժողովուրդին մեծամասնութեան հազիւ մէկ երկու արձագանքներ լսեցինք: «Երկրաշարժը դեռ կը շարունակուի...»:

Մորմնիչ գութիւն, որ ահաւոր մեծ թիւ սիրահար բոլի վայելանք աւելի կը սարսուցանէ զանոնք, որոնք շիթ մը արցունք ունին միշտ պատրաստ այս երկրաշարժէ ֆեաւագիտներուն համար:

Սակայն այդ թունդ հանող երեք բան որ պղծնի պէս կը հնչէ եւ ծնողայ պէս կը զօղանջէ շատերու ականջին, որոնք իրենց սիրտը գոցած ողորմածախրութեան, հեշտանքներու ճամբան բռնած են:

Ասդին փարթամ եւ սնկոյթ կենցաղաւորներ իրենց հաճոյքի վայելանքներէն մաս մը չեն զոհեր, պահ մը երեւակայելու համար անդին ահագողի մէջ եղող թշուառներու վիճակը:

Ասդին, այնպէս գրասէրներ փառաւոր սրահներու մէջ շրմիկներու թղթիկը բաղմոցներու վրայ ընկողմանած՝ հանաքտակնարկ մը կը պատմեն օրը օրին եւրոպական սուրհանդակով հասնող նոր եւ թարմ հրատարակութիւններու եւ հոն գլաներու վրայ, գրական-վիպական պատուիրներ կը լսեն, ժիւլ Լըմոնիէի տեսութիւններ կը պարզեն, Քոքէի, Լոթիի, Պորմէի մտային բաղանջներ կը հալածեն. մոռնալով թէ անդին գաւառի նորաթիթ մանուկները բուքէն կը սառնին:

Ո՛վ Աստուած, ինչ մտահաճոյք է այդ Ասդին, քահանաներ, որպէս թէ Տիրոջ պաշտօնեայ եւ պաշտպան աղբքանքներ, միայն շրթունքով կը կախազեն Աւետարանը, առանց անոր վեհ իմաստին թափանցելու. չենք գիտեր որ իրենց քակին համար կ'աղթեն թէ ժողովրդեան հոգիին: Միայն սա կը տեսնենք որ ստակին չափազանց աչք տնկած են եւ անոր փարած ուժգնապէս, բանի տեղ չընելով իրենց արժանապատուութեան նուաստացումը, իրենց արարքներու դժբեղած բողոքները, իրենց հասցէին ուղղուած լաւ թելադրանքները:

Ասդին, կիներն անհոգ բոլորովին իրենց ճոխ արդուգործին կը նային կոմսուհի մը

Խ. Տ Ե Մ Ի Ր Ձ Ե Ա Ն

ԱՅՍՏՆԱԳՈՅԸ

ԴԵԱՄԷԼ ԳՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ԵԶԿԵՐՏՍԻ ԴԵՄԱՅ

Երեւորական գործիքներով անմիջական եւ առանց ցաւի ամեն տեսակ ակույթի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար եւ նման կեղծ ակուանքներու, քանթիկներու ոսկիէ, ալիւմինիումէ, քաւոյրէ: Ապահով եւ տոկուն քաղցած ոսկի, բլաթին, կայլն, կայլն: Լինտերու հիւանդութեանց դարմանում երեւորական եւ ուրիշ միջոցներով:

երեւալու խօս մարմնավոր. կարծես այդ շին-
ծու զարդերուն չափ արժէք չունենային
երկրաշարժէ արկածեալ իրենց բոլորը:

Այլին աղաք իրենց սնունդը կ'ընդունին
միշտ, դպրոց կը վազեն դուռը, գա-
ւերու կ'ունենան արժան, և երբ գիշեր-
ները կը զանաւն տուն, անշուշտ կը յիշեն
թէ անդին երկրաշարժէ արկածեալ տարե-
կիցներ կան անտուն, ապրին այն պղտիկ-
ները, որոնք արծաթ թաթիկներով սրտի
նուրբեր տուն, սրտիկ իրենց աղաքիկ-
ներն ու բուրդներն ձիւնին ներքե չմտնին
զոգահար:

Տղոց այս սիրտը կը մաղթեմ որ անց-
նի ամենուն, պէտք է որ առհասարակ բո-
լոր եկեղեցականներ, վաճառականներ, գը-
րուսներ, բարեկեցիկ վարձակաւներ, կի-
ներ, աղաք օգնութեան հասնին կարող
երկրաշարժէն ծանրապէս տուժողներուն:

Այս կերպով, աղէտը կը դարձանուի, և
ժողովուրդը սառն անտարբերութեան մե-
ղապանքն զերծ և առանց խղճի խայծի
կը վայելէ ի վէպ կատարած բարիքն
զգացած անճան հրճուանքը:

«Երկրաշարժը զեռ կը շարունակուի...»

Այլ կը հասկնար թէ ինչ սրտածախ-
բօթ է այս, չէ:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԳ.

ՀԱՌԵՍ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Երեկ Աղեքաւադիոյ մէջ մեծ շքով կա-
տարուեցաւ ամենաթանկ հանգիւր Տիար
Կարապետ Էտիրնէլեանի Օր. Վերջորիւ Գ.
Սարգիսեանի հետ:

Այս միութիւնը որ բերկրութեամբ կը
լեցնէ երկու կողմի բարեկեցիկները, չի կրը-
նար բայց եթէ շնորհաւորութիւններ խել
ամեն կողմէ որովհետեւ այդ նոր ամալը
կազմող երկուստեքները ամեն շրջանակ-
ներու մէջ յարգանք և համակրութիւն վա-
յելիւ ամեն յատկութիւնները առատօրէն
կը ցուցնեն իրենց վրայ:

Օր. Վերջորիւ Սարգիսեան որ աղջկին
է առեւտրական հրապարակին վրայ ծանօթ
և երկար ժամանակէ ի վեր Եղեղատու հա-
տատուած Տիար Գեորգ Սարգիսեանի, բայց
ի իւր բնական շնորհներն, խնամեալ
դատարարութեան մը ամեն առաւելու-
թիւններով օժտուած է և մին է այն հազ-
ուադեալ հայուհիներէն որ փարաւոններու
երկրին մէջ վեր կը պահեն Հայ իգական
սեփն պարկեշտութեան, մտացիութեան և
չքնադուքեան համարը:

Տիար Կարապետ Էտիրնէլեան ինքնօգ-

նութեամբ, համբերատար աշխատութեամբ,
և առկուն պարկեշտութեամբ առաջ եկած
մեր երկրասարգիներու դասին կը պատկա-
նի ուր առաջնակարգ տեղ մը գրաւած է:

Իր բնատրութեան աշխուրդով, միշտ
ծառայութիւն մը մատուցանելու պատրաս-
տակարութիւնը և վեհանձն ու ակաբայի
նկարագիրը սիրելի դարձուցած են զինքը
ամենուն:

Գարծի աշխարհին մէջ իր կարողութեան
չափը տալու համար բաւական է յիշատա-
կել թէ, Տիար Կարապետ Էտիրնէլեան,
երբեմնի Սանտեան տան Գահիրէի տնօրէ-
նը, հաշիւ երեք տարի առաջ պաշտօնի
կոչուած է Մանթուսեան տան մէջ և ահա այ-
սօր, իր անքնադատելի պաշտօնավարու-
թեան շնորհիւ՝ արժանացած է կոչուելու
միւսեայ տան թանկարի ճիւղին տնօրէնու-
թեան կարեւոր պաշտօնին:

Պարկեշտ աշխատասիրութեան մը տիրարն
է Կարապետ Էտիրնէլեան որ իրեն օրինակ
կրնայ ծառայել մեր երկրասարգիներուն:

Հարսանիքը, ինչպէս ըսինք շատ շեղ
եղաւ: Այս առթիւ հարսին ծնողը իրենց
Նկար-Տանիէլ փողոցի բնակարանին մէջ
ընդունելութիւն մը կատարեցին ուր տեղի
ունեցաւ նաեւ պատկազրութեան արարողու-
թիւնը նախագահութեամբ Գեր. Այվազեան
Եպիսկոպոսի:

Այն. Յովհաննէս Էփէնտի Մանթուսեան
կնքահայրն էր նորագոյնի ամուլին:

Բազմաթիւ հրաւիրեալներու մէջ նշա-
նիցները վաւեր. Կարապետ պէյ Ռեկիւսան
և Եուսուֆ պէյ Ջրաբան, Տիար և Տիկին
Վալմու Պօրն, Յովհաննէս Էփէնտի և Տի-
կին Մանթուսեան, Սահակ Էփէնտի Արա-
համան և ընտանիքը, Ելեւնէն օղլու ըն-
տանիքը, Գրիգոր Էփէնտի Մուսթաֆեան,
Տիար և Տիկին Վ. Գալիպեան, Արթի-
նօֆ ընտանիքը, Տիարը Պօզուս և Պարոտ
Յակոբեան, Տիար և Տիկին Անթուան Բրի-
մի, Տիար Պրեմ Օշանեան կն., կն.:

Կնքահայրը փոխանակ աւանդական պրո-
շին և կամաւարաններն տրցալ մը Գրիգորի
Պօնտիէլ բաժնեկիւղիներ սպրդեցուցած է ըն-
ծանքու յատկացուած սեղանին վրայ որ
պարզապէս ցոյցահանքէ մը կը կազմը,
թանկագին գահաւորութեամբ, մեծարժէք զոգոր-
նեան և նորակերտ արծաթեղէններու, ամենքն
ալ նուէրներ երկու կողմի աղղկաններու
և բարեկեցիկներու:

Անհամար ծաղիկներով և մեծածոր
հեռագիրներ մանջ շնորհաւորութիւնները
բերած էին՝ հին բացառիկ բարեկեցիկներու:

Հարսը անգամ մը ևս շնորհալի իր հար-
սանկան ձերմոյկ թողին տակ, փառաւոր
արդուգարգ մը կը կրէր:

Այն ատեն ժերմէն ուղից ի գութ շար-
մեղ զայն իր խի վշտին ու մարմնքին պատ-
կերով, փորձեց յաղել անոր սիրտը ցուց-
նելով անոր այն կեղծը զոր պիտի զգար
անոր մեռնելը տեսնելով:

—Արդէն վերջին այնքան պատճառներ
ունիմ, Սթա Ապուհա, կ'ուզես ուրեմն մի-
տանէն աւելի ստուրկ, միտ ամենէն աւե-
լի գիտակ կ'սկիծ մը պատճառել ինծի:
Հին տեսներ որ յիմարութիւնը սիրտս կ'սոր-
կար կ'ընէ:

Սթա Ապուհա փարեցաւ իր բարեկեցու-
հիւն, միմիկներով զանի:

—Ձեզի համար, զիտի ջանամ հոյա-
տակիլ, միայն ձեզի համար. վաղից ան-
չափ ցաւ է ինծի ձեր տառապիլը տեսնել:
բայց անկէ առաջ, անկարելին պիտի փը-
ծեմ այդ ամենաթանկ աղաքներու համար:

Տի. ր. և Տիկին Գեորգ Սարգիսեան շը-
ջապատուած իրենց զաւակներով, տան պա-
տիւնները կ'ընծայէին իրենց յատուկ կեն-
ցապարտութեամբ:

Հրաւիրեալները առատօրէն պատուա-
սիրտեղ և նորապսակ ամուլին երջանկու-
թեան համար շարժանակի գաւաթներ պար-
պել ետքը իրենց բարեմաղթութիւնները
նկարագրեցին և ցուցանեցին ժամը 7ին:
Թնորթիւն խմորագործները կը փութայ
այս առթիւ իր անկեղծ և սրտազին շնոր-
հատրութիւնները և բարեմաղթութիւնները
նկարագրեցին Տիար և Տիկին Էտիրնէլեանի
և իրենց ծնողաց:

ՓՈԽԱՆ ԵՄԱՂԵՓՈԽՆՁԻ

... Խմբագրութիւն

«Փարոս» աղբիւրնու լրագրի

Գահիրէ

Կը խնդրենք որ բարեհաճիք ձեր լրագրի
յառաջիկայ թիւին մէջ հրատարակել հե-
տեւեալ յայտարարութիւնը:

Ընդունեցէք այս առթիւ մեր շնորհակա-
լեաց հաւատարմը:

Տիար Կարապետ Էտիրնէլեանի ընդ Օ-
րիորդ Վերջորիւ Սարգիսեանի ամենաթա-
նկ հանգիւր՝ փոխան ծաղիկներով և նու-
րած են ընկերութեան, Տիար և Տիկին Ար-
մենակ Կամարական 3 և Տիար և Տիկին
Տիգրան Կամարական 3, ընդ ամենը 6
անդիւնական սակի:

Արտատախտած Բարեգործական ընկերու-
թիւնը ըստ պարտականութիւն մը կը կա-
տարէ հրատարակել իր իրական խնդակ-
ցութիւնը յայտնել և կատարեալ երջանկու-
թիւն մաղթելով նորապսակ ամուլին՝ այնու
զի իրենց արդէն բերկրաւոր միութեան
պատճառ կ'ըլլայ նաեւ Եղեղատուի համար
բարեկործանական նոր դրութեան մը կիրարկ-
ման, և իր ջերմ շնորհակալութիւնը յայտ-
նելով վերջիշեալ աշխուրդներու անհրաժեշտ
այնու զի այդ դրութեան առաջին գործադ-
րողները և հետեւեալը այսպէս աշխուրդ գա-
ղափարի մը գործնական թելադրիչները կը
հանդիսանան:

Ի վրեժաց Տնօրէն Ժողովոյ Աղբ. Բար.
ընկերութեան

Առեւտրապիլ

Ղ. ԱՅՐՈՒՆԻ

Վ. Առեւտրապիլ

Պ. ՕՃԱՆԵԱՆ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԱԺՈՒՐՅԵՆ

ԹԻՐՔԱԿԱՆ մամուլը կը զովէ Զախմա
դահլիճը Մահմուտ փաշան Յունաստանէն
արտաքսած ըլլալուն համար:

ԱՐԴԻԻՆԱՐԵՐ ՍՊԱՌՆԱԻՐՆԵՐ. —
Անցեալ շաբթու վերին Ալայանիոյ Սթանիցա
քաղաքին մէջ, զօրքերը որ շատ ժամանա-
կէ ի վեր թաշակին չէին ստանար, պաշա-
րեցին խոնարհ ուր կը գտնուէր միւթա-
սարիքն ու զինուորական հրամանատարը և
ցոյցէն սպանաւորի անցան: Վերջապէս
թաշակին վճարուեցաւ և զօրքերը ետ բաշ-
ուեցան:

ՍԵՒԱՆԻԿԻ տեղական իշխանութիւնները,
հակառակ զեղապաններու բողոքներուն Դիւա.
13ին սկսան բարափի տուրքերը հաւաքել:
Պետութիւններու ներկայացուցիչները այժմ
այդ խնդրով կ'զբաղին:

ՕՍՄԱՆԵԱՆ Հանրային Պարագի Հինգ
այլ և այլ հիւանդանոցներ և ծխախոտի Նոյնա-
բերի հասոյթները բարձրացան 107,837
տաճկական ոսկի, մինչդեռ 1900ին 113,
468 ոսկի միայն գայացուցած էին: Թէմ-
պէրի Նոյնաբերի հասոյթները 5,000 ոս-
կի բարձրացան:

ՆԱԽԱՎԱՀԱԿԱՆ ԿՈՌՈՒՓՈՐ. — Վերջերս
Ռոզվելթ նախագահը Լորտ Բոնսթեֆօթի ըն-
կերակցութեամբ Վաշինկթոնի ծառայողնե-
րէն միոյն մէջ պտտած միջոցին, մարդ մը
նախագահին վրայ յարձակեցաւ և կուրծ-
քէն հարուած մը իջեցուց:

Պ. Ռոզվելթ պարագիւրը չի կորսնցուց
և փառաւոր կոռումֆով մը զետին զօրեց
զանի:

Յետոյ նախագահն ու անդիւնական զե-
պանը իրենց պտոյտը շարունակեցին:

ԱԹԵՆԻ ԽՈՌՈՎՈՒԹԻՒՆԵՐԸ. — Ու-
տանողները համաձայն չեն Աւետարանին
թարգմանութեան ղեկաւորած մեղնոցներուն
անբաւականութեանը ղեմ բողոքելու: Նպա-
տակաւ նոր միութիւնի մը գումարմանը մասին:

Կառավարութիւնը կը յայտարարէ թէ
ամեն միջոց ձեռք պիտի առնէ բարեկար-
գութիւնը չի վրդովելու համար:

Աթենքի քաղաքապետը շրջաբերութեան
հանած է յայտարարութիւն մը որով բնա-
կիւնները կը հրաւիրէ հանդարտ կենալու:

Ասքի խմբագրութիւնը խմբովին բաշուե-
ցան և նոր թերթ մը հիմնեցին, Նեոն Ասքի:

մեծցիւր եւ. ամենէն այլապէս բաժանու-
թիւններու թողաւորութիւն ըրեր են. բա-
ւական էր որ ուզէի՝ կ'ունենային: Հիմայ
հանրմը իր խաղալիքն ձանձրացեր է ու
կ'ուզէ կոր խորտակել զայն... Սթա Ա-
պուհա նեղութիւն պատճառել սկսած է. «ն
ուրեմն շուտ, շուտ, ինչ որ կ'ուզէ ըլլայ,
հեռացնելու է զանի, ինչ կ'ընդունի որ ալ
ըլլայ. — Թող անհետ ըլլայ ու մոռնանք
զինքը, ահա՛ պէտք եղածը... Ու զուր
կը զարմանա՞ք, զուր որ անմեղ էր ու ան-
բիծ, երբ արեւոս զուլիս կը ցատկէ, երբ
իմ մէջս և իմ բոլորստիքս ամեն բան ա-
պտաւորութեան կը մղէ զիս... ոճիւր մը
անգամ ինծի բնական բան մը պիտի երե-
ւար... Կ'ատեմ հանրմը որ զիս կը լրանէ,
կ'ատեմ և կ'ազատեմ զերկերը որ մեղ-
սակից են անոր և կ'ատեն զիս վառնող

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԵՄԱՆՈՅՑՅԱՆՈՒՆ ԳՈՂԱՐԵՂ ԵՄԱՂՑ ԵՆ ԳՈՂԱՐԵՂ ԵՄԱՂՑ ԵՆ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ներքին գործոց նախարարութեան մէկ վճիռը որ շարաքի իրիւն Պաշտօնական Օրագրին մէջ հրատարակուեցաւ, կը յայտարարէ թէ թանձաւ քաղաքը ժամտախտէ վարակուած է:

—Ն. Բ. խախտիլն գահակալութեան տալիս քաղաքին ու Պաշտօնական մէկ մէկու շատ մօտ ըլլալով՝ խախտիլն մէկ ընդունելութիւն մը միայն պիտի ընէ Ապրիլի պաշտօնին մէջ երկու հանգանակներու առթիւ: Այս ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ Յունիս 14ին:

—Ն. Բ. խախտիլն յառաջիկայ ամսոյն տալիս քաղաքին տեղի պիտի ունենայ Յունիս 23ին երկուշաբթի ժամը 10ին:

—Անդրիկ Արտաքին գործոց պաշտօնատունը անցնալ շարժու հրատարակեց Լորտ Բրուկերի Նոյեմբերի 18ին Լանստօն մարզիկին զարկած մէկ հեռագիրը որ Սուտանի քաղաքական վարչութեան մէջ պաշտօն ընդունելու համար ներկայացող երկուստարդ անդիւցաններուն կը յայտարարէ թէ առժամ տրամադրելի պաշտօն չի կայ:

Հեռագիրը վիճակագրութիւն մը կը ներկայացնէ ըստ որում Սուտանի քաղաքական վարչութեան մէջ գտնուող անդիւցանի պաշտօնականներու թիւը 67է, որոնց 46ը զինուորական են եւ 21 քաղաքային: Այս թիւին վրայ 6 զինուորական ու 3 քաղաքային երկարութիւններու մէջ կը գտնուին, 5 զինուորական Գարսոֆան, 3ը խաբթուս եւ 4ը քաղաքագրութեան մէջ:

Հեռագիրը կը վերջանէ ըսելով թէ վերջերս 8ը քաղաքային անդիւցաններ նահանգներու քննիչ-օգնական անուանուեցան: Հաւանական է որ ուրիշ յառաջացումներ ալ տեղի ունենան, բայց արդի պաշտօնատարութիւնը գոնէ տարուան մը համար բաւական պիտի ըլլայ:

—Ինչպէս ծանուցած էինք Պ. Թոմէնի իտալից լեռնագործ զործակատար անուանուեծաւ ի Պէրիպատ, եւ Սարվակո Ռաճնի մարզիկը Գահիրէի ղեկաւարտական գործակատար:

Պ. Թոմէնի փետրուարի առաջին օրէն մէջ պիտի մեկնի իր պաշտօնին զբաղմունքը անցնելու համար:

Սելվակո Ռաճնի մարզիկը Գահիրէ կ'ըստատի Յուլիանի վերջերս:

—Մեղքեան սխալութիւն վաճառատունը զննելի նորութիւն մը յղացեր է:

Ծննդեան եւ նոր տարուայ առթիւ ամեն անոնց որոնք հարիւր սխալութիւն գնում մը կ'ընեն շքեղ օրացոյց մը ընծայ կ'ընեն, ինչպէս:

Երկար ժամանակ նախապատիւ եղայ իրենց մէջ... Կ'ատեմ փաշան որ ձեզի տառապեցուց, կ'ատեմ ներքինները որ պիտի գտնուէին զիս վաղը՝ եթէ միայն փորձ փորձով գէտ կ'ենալ: —Կ'ատեմ ամենքն ալ, բոլոր հոգիովս, ոչ կ'ուզեմ զանոնք մեռած տեսնել, այլ ըստ, արիւնքով թախտէ, ի չիք դարձած:

Յետոյ, գաղտնիքներ կը թռնէ բերնէն, ամօթէն գայլահար ժերմէնին կը պատմէ միտքը ինչպէս բոլոր յիշատակները, իրմէ պահանջուած հաճոյականութիւնները, անարգութեան աստիճան ուր իջուցին զինքը այդ պաշտօնին մէջ:

Ո՛հ Սթա՛ Ապուհա... միմէ կարելի՞ բան է... զո՛ւն ես իրաւ...:

Այս, ինքն իսկ է, իր նախնական բընայութիւնը բրտութիւնը վերստին զգեցած. իր

պէս նաև պոտիկ եւ սիրուն տուփերու մէջ փակուած ամեն տեսակ անակնկալներ:

—Հանրային կրթութեան նախարարութիւնը մտադիր է Գարս-Լի-ախի բժշկական դպրոցին շէնքը ընդարձակել եւ Հիւս-սէինիէի նախնական դպրոցին համար նոր շէնք մը կառուցանել Ապրիլին:

—Դեկտեմբեր 16ին արուած խախտական վճիռով, յառաջիկայ յունուար 1էն ըսկոնալ Երկուշաբթի մէջ հրատարակուած եւ երկրին մէջ ուղարկուած օրաթերթներուն եւ պարբերական հրատարակութիւններուն ստորեւ մէկ միլիոն պիտի ըլլայ եթէ նախնապէս փրկանաւորուած ըլլան, իսկ երկուշաբթիէն հետեւեալ պարագային, իւրաքանչիւր թիւի կամ օրինակի համար առանց կշիռի սահմանի:

Այս կարգադրութեամբ սակագինը 200 կրամի եւ ասոր կտորակներուն համար 1 միլիոն չի պիտի ըլլայ, ինչպէս էր մինչեւ հիմայ:

Նոյն թուականին սկսեալ, օրաթերթին յաւելուած չի պիտի համարուին առանց տար անակագին փոխելու, այն անշտ թերթերը որոնք օրաթերթին շարունակութիւնը կը կազմեն, առանց ինքնին զատ հրատարակութիւն մը ներկայացնելու: Այդ թերթերը իրենց ճակատը պէտք է կրեն «յաւելուած» խորագիրը, եւ թէ որ հրատարակութեան եւ օր թիւին կը պատկանին:

Այս կարգադրութեան համեմատ մէկ ազդ մը միայն յաւելուած չի պիտի նկատուի, որովհետեւ զատ հրատարակութիւն մը կը կազմէ:

Ահապատեալ ինչպէս քան վրայ օրաթերթերուն մէջ խառնուած յաւելուածները եւ ընդհանրապէս իբր յաւելուած Երկուշաբթի տարածքները որոնք օրաթերթին հետ ունի ուղղակի անշտութիւն չունին, առանձին պիտի փրկանաւորուին իբրեւ ոչ պարբերական հրատարակութիւններ, այսինքն 30 կրամը երկու միլիոն:

—Թղթատարական վարչութիւնը համաձայն է մարտային վարչութեան հետ ուղարկողին վերադարձնելու համար անպարկեշտ լուսանկարներ եւ պատկերներ պարտաւոր դրաները:

—Յետաջիկայ Յունիս 1էն սկսեալ Տանկատան ուղղուած թղթատարական վրձնարարները օսմանեան կայսրութեան թղթատարներուն վրայ քաշուած պիտի ըլլան եւ անոնցմէ վճարելի: Խաբաքախի վճարագիր 500 ֆրանքն աւելի չի պիտի ըլլայ:

Որովհետեւ Տանկատանի բոլոր քաղաքներուն հետ կարելի չէ վճարագիր փոխանակել, կը յորդորենք ժողովուրդը որ նախ

Լուծեան ամենամեծ մէկ խորհուրդին մէջ՝ կը նշեմ զեռ ներքին ահաբեկ վայրապութիւն մը. ու ժերմէն կը դարձուի անոր հօտերը լսելով. ու ալ աւելի կը մորմաքի սիրտը երբ կը տեսնէ այնչափ սըրբատաշ զիներով այն աղուր զեմքը որ մնալիք բոլորեման մէջ զնգերահար կը ցըցուի. այն զեղեցիկ զուարթափայտ աչքերը, այն անուշ ու աչքերը զոր այնչափ կը սիրէ, ալ ոչինչ ունին մարդկային եւ գորովական: — Երբ իրենց տեղը՝ Գարայիսները իրենց օրհնական զոհին շուրջը մահուան պարբերը կ'երգեն, այդ աղջկան աչքին մէջ երեցող շողեւնին նման բոց մը ունին հարկաւ իրենց բերեալուն խորը:

Աղջիկը մոռցած է իր Յորանները զայն ըրողին ծայրայեղութեանը մէջ, եւ, նման այն ամիսն խմորներուն որ իրենց արքե-

ւ առաջ հասնայ ուղարկող թղթատարին թէ ստացող թղթատարն ի վճարագիր կ'ըստանայ թէ ոչ:

ՀԱՌԱՊԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՏՈՒՆ, 27 Դեկտ. — Լորտ Բրիչնէր հետեւայ հեռագիրը ուղղելու է պատերազմական Գարսոֆանութեան:

«Եօ Նանէպուրի, 26 Դեկտ. — Ռընտը զօրավարը կը ծանուցանէ թէ ար վերջի հրամանատարութեան ներքին գտնուող ըստուար խումը մը յաջողութեամբ յարձակել է Ֆիրման գնդապետին բանակին վրայ: Կը վստի որ կորուստները մեծ ըլլան: Խումբը կը բաղկանար չորս զօրախումբէ եւ երկու թնդանօթէ եւ հարիւրամիլիոն ու Պէթլէհի միջեւ Պլոֆիւուզի գիծը կը պաշտպանէր: Խմբերը Լայթ հրօտի առաջին եւ երկրորդ վաշտերը թշնամին հաշտեցին»:

ԲՐԻԻՃԷՍՏՈՐԻ, 26 Դեկտ. — Վան Շայքլի հրամանատարը զինուորական աստեանի առջեւ դատուեցաւ եւ հրացանի բռնուեցաւ, անձնատուր եղած վիրաւորեալ զինուոր մը վրայ զենք պարսպած ըլլալուն համար:

ՍԷՆ ԲԷԹԷՐՍՊՈՒՐԻ, 27 Դեկտ. — Բանի մը թերթերը կը անդին թէ պարսկական ծովածոցին խնդիրը ամբողջովին յարուցանելու յարմար առիթն է, սակայն այդ թերթերը պաշտօնական շրջանակներու մէջ անորոշ կարծիքները չեն պատկերացներ:

ԼՈՒՏՈՒՆ, 27 Դեկտ. — Լանտին վիճակին նոր բանակաւորը կը բաղկանայ 36, 800 սպայէ եւ զինուոր եւ 90 թնդանօթէ:

ԼՈՒՏՈՒՆ, 27 Դեկտ. — Ինք մարքիւր որուն կ'ընկերանար Ճաքոնի գետապանը, այցելութիւն տուաւ Արտաքին գործոց նախարարութեան: Յետոյ Մարշալուրի Հատուկ մէջ թաղուրին ներկայացաւ: Յունուար 3ին Մանսիոն Հատուկ մէջ պիտի նախաձեռնէ եւ 12ին Մարսել պիտի մեկնի:

ԼՈՒՏՈՒՆ, 27 Դեկտ. — Օրանի մէջ 34 Պօէր գիւրի բռնուեցաւ:

ՀԱՒԻՑԱՔՍ, (Ն. Զ.) 27 Դեկտ. — Պ. Մարքոնի հոս հասաւ անոր-անուշանտեան առանց թելի հեռագրական կայարան մը կառուցանելու համար Գար Պրեմոնի մէջ:

ԼՈՒՏՈՒՆ, 28 Դեկտ. — Թաթթիլուայի բաժնապահ տարնական շրջաբերականը Լանքաշայրի համար լաւագոյն առուուոր մը կը կանխատեսէ, որուն պատճառներէն մին է Չինաստանի ըրած աւելի շահաբեր ապուսպրանքները:

ցութեան մէջ վերջը վերջը իրօք կ'ըսկսին զգալ այն տանջանքները կամ հեշտութիւնները զոր կը բաղձան զգալ, Սթա Ապուհա ալ իր երեսակայութեան մէջ ըմբոստութեան նորոգ աւարը մը կը բաղէ եւ իր սեպհական բորբոքումովը կը զինովնայ: —Երբեք ժերմէն զանի այս վիճակին մէջ տեսած չէ. ի զուր խեղճ գաստիարակուհին կը փորձէ ամեն հնարաւոր միջոցներով հանդարտեցնել զանի, իր սարսափը, իր արցունքներն անգամ ապարդիւն կը մնան: — Սթա Ապուհա այն ժամերն մեկուն մէջն է որոնց մէջ ամենին մեղմ բնայեցան անգամ սըրբագործ կը գտնուին:

Այլեւ ժերմէն չի ճանչնար ամենին իր սիրուն փոքրիկ ընդրը մոլորեցող բոցափայտուած այդ զիմակին մէջ, խօշակաւ շարժմաններով, սպաննացալու բազուկներով

ԼՈՒՏՈՒՆ, 28 Դեկտ. — Թաթթիլ կը սկսէ Արեւելի մէջ Անգլիոյ գերիշխանութիւնը ապահովելու հարկին վրայ եւ կաղաք որ հինգական եղբայրներուն վրայ բաւականաչափ նաւային կայարաններ չունին:

Լորտ Լանտին Ինք մարքիւր թաղաւորին ներկայացուց որ շատ շարձակ ընդունելութիւն մը ըրաւ եւ հրաւիրեց զինքը իր բովը նստելու: Խօսակցութիւնը 20 վայրկեան տևեց:

ՍՕՖԻԱ, 28 Դեկտ. — Սօքրանիէն փոխառութիւնը մերժած ըլլալով՝ Գարապէթի նախագահած Կաշիկը հրատարեցաւ:

Իշխանը Պաշտօնական կանչել տուաւ:

ԳԷՅՐԹԱՌԱՆ, 29 Դեկտ. — Գարի տրեւանան գաղթականութեան իրարու միացած գոմանտները որոնք մօտաւորապէս 700 հոգի կը բաղկանային, ամսոյն 22ին եւ 23ին Գալլիկա գացող նպարտապետին վրայ յարձակեցան երկայն կիրճէ մը անցած տանին: Թշնամին ետ մղուեցաւ 3 մեռանքներով եւ 20ի չափ վիրաւորներով:

Լորտ Բրիչնէր հեռագրով մը կը ծանուցանէ թէ Թրիֆունիէի գերիները ապատարձակուեցան եւ Պէթլէհի հասան:

ԼՈՒՏՈՒՆ, 29 Դեկտ. — Տիւնիսի Ասիլիքի թերթերը Լանտինի թղթակցը կ'ըսէ թէ սըր Գարապէթ-Պանիքման անձնական կոչ մը ուղղած է Լորտ Ռօպերթի ապատական կուսակցութեան վերստին միանալու համար, բայց Լորտ Ռօպերթի որոշած է այդ կուսակցութեան անշտ մեղ որքան տուն որ այդ կուսակցութիւնը ներկայ կացութեան մէջ գտնուի:

ԹԱՆԺԻ, 29 Դեկտ. — Թաթթիլ մը յանկարծօրէն խոյացաւ Սաֆի քաղաքին վրայ զոր ամբողջովին տակերց:

Չորը բանդեց քաղաքի վաճառատուններ եւ հեղեղի նման բոլոր ապրանքները ծով առաւ տարաւ:

Մօտադորապէս 200 հոգի, բոլորն ալ բնիկ, խեղդամահ եղան:

ՄԱՆԻՅԱ, 27 Դեկտ. — Պոլսոյցիներու ստորար խումբ մը Սաննար կղզոյն մէջ ամերիկացի հետեւալագոր խումբ մը վրայ ինկաւ եւ 14 հոգի սպաննեց: Ապստամբները ետ մղուեցան մեծ կորուստով:

ԲԱՐԻՉ, 27 Դեկտ. — Պ. Լուպէ ստորաքրեց քաղաքի զօրավարներու յառաջացումը: Պ. Վալաէր Ռուսօ մօտեցաւ Միջերկրականի եղբայր պիտի երթայ քիչ մը հանգիստ ընելու համար:

ՊԱԼ, 27 Դեկտ. — Սիոնական Գոնկըն բացուեցաւ հազարաւոր ներկաներու հանգալ: Գոնկըն պիտի զբաղի խաղաղացիներուն վերածննդեան խնդրով:

այդ կնոջը մէջ... Այն ասան ժերմէն կը վախնայ. կը կարծէ որ իր բարեկամահին պիտի խնդրեայ... Եւ ոսկայն չի համարձակիր մարդ կանչել, վախնալով որ մի գուցէ Սթա Ապուհա բերնին անխոհեմ խօսքեր փակցունելով երկուշաբթի օրինակապատիժի մը ենթարկուի. բայց յեղափարծ աղջկանը աչքերը կը վաբազուրով, արցունքներով հեղձամղձուկ գորգին վրայ կը կըլի. ջգային ահոյի տաքապէ մը բրտնուած...:

Երբ սթափեցաւ, ժերմէն, անոր բովը ծնրադրած, բունքերը քաղաքաւթաւ կուխաններով կը թանար. եթերի որուակ մը բացուելով, սենեակը զեղարանի հոտով մը կը լեցնէ:

Շարունակելիս) Թարգմ. Գ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱՊԱՆԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԵԹԻ ԵՒՆԻՔԻՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1893 թ.

ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻՈՒ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դուրսբերելու կը գտնուի. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ, ճշգրտութեան համար գիտել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐԱՅԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:

Աղեքսանդրիա Սնթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալուհար: Գ. ԵԿԱՒՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳՆՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 9 ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ: ԲՈՌՈՒՄԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'առանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ: Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ: Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր: Կը դանձէ եղիպտոսի և արաւ-սասմանի վրայ քաշուած փոխանակագրեր: Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւանդ մուծակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ
ԵԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիբէա, Իզմիր, Միտլի և Կ. Պօլիս:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբթի օր, առաւօտեան ժամը 7ին:
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաները Բիբէա հանգիստելուն, Ալեքս. այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպօլիս, Մէրսին և Իսկէնտէրու:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:
Տասնընչեք օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.
ՃԻՏԵՆ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԵՑՏԱ, ԱՏԷՆ
Ճամբորդութեանց և ապրանսաց համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօռ-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գիւլի ամեն մասնաճիւղերուն:
1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՆ-ԴՈՐԾԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՋԵՎԱՑԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականերէն կ'ընդունուին Պօլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրի, Պրոնշուիի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական ֆրէտի Ֆօնսիէի, Բումբէի երկաթուղոյ բրոմէաներու, և դարձեալ ամսամսաւորներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:
Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապաւորանքները ըլլալու են կանխիկ փութի միջոցաւ: Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «գօնթու ուսմ. պուրքման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն:
Մինչև 20 զըշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Ց. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:
Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:
Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz
CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

Մեծ վաճառատուն հանգրձնողինաց, արանց, կանանց և տղայոց համար:
Չափի վրայ գգեսներ, շուագոյն պայմաններով:
ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԷՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻԲԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՑԻ
Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաներով

ԱՆԲԸՐԷՐ ՆԻՔՈԼԱ. արդթ. Թօն. 5500	21իւն.2023 տարուութիւն Թօն. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳՈՄ ՄԸ ՍԵՆՈՒՄ Ա-ղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍՈՑԻՏ, ԵԱՑԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:
ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Աղեքսանդրիա, Թղթասան փողոց:

ՇԱՐԱԹԸ ԱՆԳՈՄ ՄԸ ՍԵՆՈՒՄ Ա-ղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍՈՑԻՏ, ԵԱՑԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղական հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000
Կառավարել. Սըր Էլլին Բալմէր.
Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:
Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:
Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլի հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, անդուլթիւն և փախում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է առնուի վերջ ի վերջ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազդու դեղէն մէյմէկ թիչ առնել:
ԲԷԿԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբուլին դեղերու նման չի խանդարեր ստամբուլ:
Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ: